ՀՏԴ 327 (479.25+575.3)

ՀԱՅ-ՏԱՋԻԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անահիտ Շագոյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ
Հայաստան

Անոտացիա

Հոդվածում ներկայացված է հայ–տաջիկական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզումից հետո, որոնք զարգացել են ԱՊՀ և ՀԱՊԿ պաշտոնական հանդիպումների շրջանակներում ստորագրված երկկողմ համաձայնագրերի և պայմանագրերի հիման վրա:

Անդրադարձ է կատարվել նաև Տաջիկստանի հայ համայնքի ինտեգրմանը: Վեր է հանվել համայնքի խնդիրները՝ մշակութային, կրթական և այլն: Չնայած երկկողմ կապերին, հայ համայնքի խնդիրները դուրս են մնում քննարկվող հարցերի շրջանակներից:

Բանալի բառեր՝ *Միջին Ասիա, դիվանագիտական հարաբերություններ, միութենական հանրապետություններ, համաձայնագիր, ԱՊՀ, ՀԱՊԿ, Էմամոլի Ռահմոն, հայ համայնք:*

Հայերը Միջին Ասիայում հայտնվել են դեռ հնագույն ժամանակներից: Ներկայիս Տաջիկստանի Հանրապետության հայ համայնքը ձևավորել է 19-րդ դարի երկրորդ կեսին՝ Արևելյան Հայաստանից (Նախիջևանից, Արցախից, Զանգեզուրից) և Իրանից այստեղ վերաբնակված հայերը: Նրանք հիմնականում հաստատվել են Դուշանբեում և հարակից քաղաքներում՝ Խոջենդում, Կուրգան-Տյուբեում, Ռիգարում, Չկալովսկում: 20-րդ դարի ընթացքում հայերը մեծ ակտիվություն են ցուցաբերել երկրի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում [11; 484–486]: Իրավիճակը կտրուկ փոխվել է 1990-ականների սկզբին, երբ Տաջիկստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ (1992-1997 թթ.):

1988-1990 թթ., արցախյան շարժման ծավալման հետ պայմանավորված, Բաքվի ջարդերի հետևանքով մեծ թվով հայեր տարհանվեցին և ժամանակավորապես բնակություն հաստատեցին Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում, այդ թվում՝ Տաջիկստանում: Սկզբնական շրջանում հայության նկատմամբ տեղացիների տրամադրվածությունը դրական էր, սակայն ամեն ինչ փոխվեց, երբ Բաքվից մի խումբ էմիսարներ ժամանեցին Դուշանբե՝ տեղացիներին տրամադրելով հայերի դեմ: Նրանք հիմք էին ընդունում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը,

համաձայն որի պետք էր համապատասխան միջոցառումներ ձեռնարկել այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր ազգամիջյան բախման հետևանքով ստիպված էին լքել Ադրբեջանական ԽՍՀ տարածքը [12]: Նման հակահայ հուզումներ տեղի ունեցան Թուրքմենական ԽՍՀ–ում (Նեբիտ–Դաղ, Աշխաբադ), Ուզբեկական ԽՍՀ–ում (Սամարղանդ), ՌԽԴՍՀ Հյուսիսկովկասյան և այլ տարածաշրջաններում [5;45]: Էմիսարները սկսեցին վախեցնել տեղի բնակչությանը այն փաստով, որ բոլոր բնակելի տները, ինչին տարիներով հերթագրվել և սպասում էին տեղացիները, կարող էր տրվել Բաքվի փախստական հայերին [18]: Դա գրգռեց առանց այդ էլ ազգային հողի վրա լարված իրավիճակը և առաջացրեց հակահայ տրամադրվածություն: Սկսվեց շրջանառվել «Հայեր, հեռացե՛ք Տաջիկիստանից» կարգախոսը: Տաջիկական մամուլում տարածված տեսակետի համաձայն 1990թ. փետրվարին սկսված իրադարձությունները հրահրվել էին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի կողմից [23]: Այնուամենայնիվ, անկախ հակամարտության ծագման պատճառներից, հազարավոր հայեր ստիպված էին լքել Տաջիկստանը: Նրանց մի մասը անձիք էին, ովքեր մեծ ներդրում էին ունեցել հանրապետության կյանքում, արմատներով Արցախից էին և, թեև նրանց անվտանգությունն ապահովելու նպատակով տրված խոստումներին, լքեցին այդ հանրապետությունը:

1989թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Տաջիկական ԽՍՀ-ում ապրում էր 5651 հայ [20; 5], ապա քաղաքացիական պատերազմի հետևանքով նրանց թիվը կտրուկ նվազեց՝ հասնելով 1000-ի: Այս ամենով հանդերձ՝ ԽՍՀՄ փլուզումը և ԱՊՀ ձևավորումը նոր հեռանկարներ բացեցին երկու անկախ պետությունների հարաբերություններում, դրանք էլ ինքնին դրականորեն ազդեցին փոքրաթիվ համայնքի հետագա պահպանման վրա:

Մինչ ԽՍՀՄ փլուզումը միութենական հանրապետություններում ընթանում էր ինքնիշխանության ձևավորման գործընթաց: Այս շրջանում երկկողմ միջկառավարական պայմանագրեր և համաձայնագրեր կնքվեցին, որում կողմերը միմյանց ճանաչում էին որպես ինքնուրույն, առանձին սուբյեկտներ: Նույնատիպ համաձայնագիր կնքվեց նաև Տաջիկական ԽՍՀ-ի հետ [10, հոկտեմբերի 20]:

1990-ական թվականների կեսերին ՀՀ իշխանությունները գտնում էին, որ համագործակցության լավագույն մոդելը տնտեսության և կոլեկտիվ անվտանգության բնագավառում միավորվելն է, որը կլուծի ծագած բոլոր խնդիրները: Նման արտաքին քաղաքական ուղեգիծ էր որդեգրել նաև նորանկախ Տաջիկստանի Հանրապետությունը, որը փաստացի ձևակերպում ստացավ 1993թ. դեկտեմբերի 28-ին Տաջիկստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 18-րդ նստաշրջանում [24; 18]: Նստաշրջանը հաստատեց արտաքին քաղաքական ուղեգծի հինգ կետեր, որոնք արտահայտում էին Տաջիկստանի աշխարհաքաղաքական և տնտեսական հետաքրքրությունները տարածաշրջանում ու բխում էին երկրի աշխարհագրական դիրքից: Ուղեգծի առաջին կետով էլ ամրագրվեց ԱՊՀ-ի շրջանակներում նորանկախ

հանրապետությունների համագործակցության շրջանակը, որը նախատեսում էր համակողմանի կապերի հաստատում [24; 19]:

Հատկանշական է, որ դեռևս 1991 թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության հիմնադիր Աշոտ Նավասարդյանը գտնվելով Մոսկվայում գործուղման մեջ, հանդիպում է ունեցել Տաջիկստանի արտաքին գործերի նախարար Լաքիմ Կայումովի հետ, որի ժամանակ Տաջիկստանի արտգործնախարարը հավաստիացրել է նաև, որ իր երկիրը կարող է դրական դեր ունենալ Իրանի, Աֆղանստանի և Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կառուցման գործում, որը և կարող է ստեղծել եռակողմ համագործակցության մեխանիզմներ [24; 19]: Այս խոսակցությունը հիմք հանդիսացավ հայ-տաջիկական համագործակցության համար: Արդեն 1992թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, հիմք ընդունելով Տաջիկստանի Հանրապետության Գերագույն խորհրդի և ՀՀ նախագահի որոշումները [1, թ.4-8], նոտա հղեց Տաջիկստանի Հանրապետությանը՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նպատակով [1, թ. 1]: Նման առաջին քայլը միջինասիական տարածաշրջանում դիվանագիտական ներկայացուցչության հիմնումն էր: 1992թ. ՀՀ Գերագույն Խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի գլխավոր փորձագետ Արման Մելիքյանը կազմեց գրություն՝ Միջին Ասիայի տարածաշրջանում դիվանագիտական ներկայացուչություն հիմնելու անհրաժեշտության և դրա աշխատանքների հիմնական ուղղությունների մասին: Մանրամասն խոսելով Միջին Ասիայում դեսպանություն ունենալու կարևորության մասին՝ Ա. Մելիքյանը նշում էր, որ տարածաշրջանում գտնվող նախկին խորհրդային հանրապետությունները դարձել են մի շարք խոշոր պետությունների քաղաքական և տնտեսական մրցակցության առարկա: Հայաստանի դեսպանատունը պետք է կոչված լիներ ուշադրությամբ հետևել ծավալվող մրցակցությանը և համապատասխան տեղեկատվություն տրամադրել Հայաստանի կառավարությանը: Միևնույն ժամանակ Հայաստանը տարածաշրջանում ուներ լուրջ տնտեսական շահեր՝ կապված հումքային պաշարների և հատկապես էներգետիկայի հետ [2, թ. 1]: Բացի դրանից, ՀՀ դեսպանատունն ունենալու էր նաև մեկ այլ կարևոր առաքելություն, այն է քաղաքական և տնտեսական կապեր հաստատել տարածաշրջանի այլ պետությունների հետ: Հետևաբար նպատակահարմար գտնվեց Հայաստանի Հանրապետության առաջին դեսպանատունը հիմնել Ղազախստանի մայրաքաղաքում: Ղազախստանը նաև գերիշխող դիրք ուներ Միջին Ասիայում՝ լինելով խոշորագույն արդյունաբերող և հանքանյութերով հարուստ, զարգացած կոմունիկացիաներով պետություն: Հայաստանի դեսպանատունը Ղազախստանում միաժամանակ ներկայացնելու էր Հայաստանի շահերը նաև Չինաստանում [2, թ. 2]:

Չնայած համակողմանի հարաբերություններ հաստատելու բոլոր ուղղությունները նախանշվեցին, սակայն, փաստացի, մինչև 1990-ականների ավարտը հարաբերությունների առաջխաղացում տեղի չունեցավ: Զարգացման

հեռանկար պարունակող փաստաթուղթ հանդիսացավ 1994թ. Մոսկվայում ստորագրված երկկողմ առևտրատնտեսական համագործակցության համաձայնագիրը [3]: Արդյունքում՝ երկու պետությունների միջև արտաքին առևտրաշրջանառությունը հասավ 239.4 հազար դոլարի, որը հետագա տարիներին կտրուկ անկում ապրեց [22; 351]: Նշված համաձայնագրի կարևորությունը կայանում էր նրանում, որ ամրագրում էր այնպիսի մաքսատուրքերի, հարկերի և գանձումների կիրառման բացառում, որոնք ունեին համարժեք ներգործություն այն ապրանքների ներմուծման կամ արտահանման վրա, որոնք ելնում էին կողմերից մեկի մաքսային տարածքից և նախատեսված են մյուս կողմի մաքսային տարածքի համար: Բացի այդ, նախատեսվում էր, որ երկու պետությունները համաձայնագրի գործողության տակ ընկնող ապրանքների ուղղակի կամ անուղղակի հարկում չէին իրականացնի այնպիսի ներքին հարկերով կամ գանձումներով, որոնք կգերազանցեին ներքին արտադրության կամ երրորդ երկրների ծագում ունեցող համանման ապրանքների համար նախատեսված հարկերը և գանձումները [3]: Համաձայնագրով նախանշվում էին Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև առևտրատնտեսական բնագավառում բոլոր հաշվարկները և վճարումները իրագործել կողմերի լիազորված բանկերի միջև կնքված համաձայնագրի համաձայն: Ըստ 8–րդ կետի՝ «Պայմանավորվող կողմերը սույն համաձայնագրի նպատակների հետ անհամատեղելի են ճանաչում անբարեխիղճ գործարար պրակտիկան և պարտավորվում են թույլ չտալ այն, վերացնել նրա հետևյալ մեթոդները՝

– Ձեռնարկությունների միջև պայմանագրերը, ձեռնարկությունների միավորման կողմից ընդունված որոշումները և գործարար պրակտիկայի ընդհանուր մեթոդները, որոնք նպատակ ունեն խանգարել կամ սահմանափակել մրցակցությունը կամ խախտել դրա համար պայմանները պայմանավորվող կողմերի տարածքներում,

– Գործողությունները, որոնց օգնությամբ մեկ կամ մի քանի ձեռնարկություններ օգտագործում են իրենց գերիշխող դրությունը՝ սահմանափակելով մրցակցությունը պայմանավորվող կողմերի ամբողջ տարածքի կամ նրա նշանակալի մասի վրա» [3]:

Կարևոր նշանակություն ուներ նաև սահմանվող տարանցման ազատության սկզբունքը, որը համաձայնագրով նախանշվող նպատակներին հասնելու կարևորագույն պայման էր և աշխատանքի միջազգային բաժանման և կոոպերացիայի համակարգին դրանց միանալու գործընթացի էական տարր:

2000-ականներին իրավիճակը փոխվեց՝ կապված աշխարհաքաղաքական նոր իրողությունների և այն մարտահրավերների հետ, որին բախվեցին երկու հանրապետությունները:

2002թ. ապրիլի 2-3-ը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելեց Տաջիկստանի Հանրապետություն: Այցելության արդյունքում ստորագրվեցին 4 միջկառավարական համաձայնագրեր, որոնք իրենց մեջ ներառում էին հիմնական փաստաթուղթ՝

Հայաստանի և Տաջիկստանի Հանրապետությունների միջև բարեկամության և համագործակցության մասին [19; 57]: Համագործակցությունը ներառում էր հիմնականում առևտրատնտեսական ոլորտը: Երաշխավորվում էր համաձայնագրի կողմերի ներդրումային գործունեության սուբյեկտների իրավունքների, շահերի և գույքի հավասար պաշտպանությունը: Կողմերից յուրաքանչյուրը պետք է խրախուսեր մյուս կողմի ներդրողներին իր տարածքում ներդրումներ կատարելու ուղղությամբ և թույլատրեր այդպիսի ներդրումներն իր օրենսդրությանը համապատասխան [4]:

2003թ. նոյեմբերի 25-26-ին տեղի ունեցավ Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնի փոխադարձ այցը Հայաստան, որի արդյունքում կնքվեցին միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրեր: Դրանք մեծ հեռանկար ունեցող համաձայնագրեր էին, քանի որ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև գոյություն ունեին երկկողմանի սերտ առևտրատնտեսական, տեղեկատվական և մշակութային փոխհարաբերություններ: Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնն այցի շրջանակներում եղավ նաև Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում՝ թեև այդ երկիրը պաշտոնապես չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Երկկողմանի համագործակցության հարցերի արագ լուծման նպատակով ստեղծվեց հայ-տաջիկական մշտական գործող միջկառավարական հանձնաժողով, որը հիմնականում զբաղվում էր առևտրատնտեսական համագործակցության հարցերով: Հանձնաժողովի առաջին նիստը տեղի է ունեցել 2004 թ. մարտի 16-17-ին Երևանում [19; 57]:

Հայ-տաջիկական հարաբերությունների առաջխաղացմանը զուգընթաց 2000-ական թթ. աշխուժացել էր նաև տեղի փոքրաթիվ հայ համայնքը [13, 12; 581]: 2009 թ. ապրիլին համայնքի անդամների համագումարի կողմից Տաջիկստանի հայկական համայնքի ղեկավար ընտրվեց «Ասիա-պլյուս» ռադիոկայանի նախկին աշխատակից Հրանտ Ղազարյանը: Այս համագումարի ընթացքում մշակվեց համայնքի գործունեության պլան, որի հիմնական ուղղություններից էր տաջիկահայությանն աշխատանքի տեղավորման հարցը և հայոց լեզվի ու մշակույթի վերածնունդը: Արդեն 2009թ. հոկտեմբերի սկզբին Տաջիկստանի արդարադատության նախարարությունում գրանցվում է Մեսրոպ Մաշտոցի անվան մշակութային կենտրոնը, որը բավականին կարևոր նշանակություն ունեցավ երկրում բնակվող հայերի համախմբման և միավորման գործում [14; 210]: Համայնքի նախագահ Հ. Ղազարյանը հանդիսանում է Տաջիկստանի հայերի վառ ներկայացուցիչներից մեկի՝ Վազգեն Մանասյանի զարմիկը: Վերջինս եղել է Տաջիկստանի ֆուտբոլի ազգային հավաքականի լեգենդար հարձակվող, ում անվանել են «տաջիկական Պելե»: Հ. Ղազարյանը երկար ժամանակ եղել է «Ուրախների և հնարամիտների ակումբի» ակտիվիստ և ռադիոհաղորդավար [21]: Հատկանշական է, որ այդ նույն ամսին համայնքի նախագահը եկավ Հայաստան և հանդիպում ունեցավ ՀՀ Սփյուռքի նախարար Հ.Հակոբյանի հետ: ՀՀ Սփյուռքի

նախարարությունը պատրաստակամություն է հայտնել աջակցելու այնտեղ բացված կիրակնօրյա դպրոցի կայացմանը և անհրաժեշտ գրականության ձեռքբերմանը [16]: Ընդ որում՝ բացված կիրակնօրյա դպրոցում սովորում են ոչ միայն հայ երեխաները, այլև նրանց ծնողները:

Համայնքի ներկայացուցիչների շարքում կային տարբեր մասնագիտությունների տեր անձինք՝ դասախոսներ, բժիշկներ, ավիաընկերության տնօրեն, գինու գործարանի գլխավոր տեխնոլոգ, ձեռնարկատերեր [6; 203]: Տաջիկստանում գործում է հայկական «Արարատ» ռեստորանը, որտեղ համայնքի ներկայացուցիչները անց են կացնում իրենց երեկոները և քննարկում ընթացիկ հարցեր: Համայնքի կյանքում նշանակալից իրադարձություն էր 2013 թ. հունիսի 8-ին Դուշանբեում հայկական խաչքարի հանդիսավոր բացման արարողությունը՝ Տաջիկստանի Հանրապետությունում ՀՀ դեսպանի, ՀՀ պատվավոր հյուպատոսի, Հայ առաքելական եկեղեցու սպասավորի, հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ [8]: Այս ամենով հանդերձ՝ համայնքը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Չնայած երկրում դրված չէ ազգապահպանության լուրջ խնդիր, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում ցանկություն է առաջանում չկորցնել ազգային ինքնությունը: Համայնքի փոքրաթիվ լինելու պատճառով՝ շատ տարածված են խառնամուսնությունները: Նման ամուսնություններից ծնված երեխաները ենթակա են ուծացման և շատ դեպքերում մոռանում են սեփական արմատները: Համայնքի մյուս կարևոր խնդիրը հայոց լեզվի դասավանդումն ու համապատասխան գրականության պակասն է: Տեղի «Էրեբունի» ռեստորանը միաժամանակ հանդիսանում է նաև համայնքի գրասենյակը: Չնայած այնտեղ կա առանձին լսարան դասընթացների համար, սակայն կա խնդիր կապված ուսուցչի և ֆինանսական միջոցների հետ: Վերջինս հավաքվում է կամավորության սկզբունքով, իսկ համայնքում մեծ բարերարներ չկան:

Վերոհիշյալ խնդիրները, սակայն, որևէ կերպ չեն շոշափվել երկու երկրների ղեկավարների միջև տեղի ունեցած հանդիպումների ընթացքում, քանի որ դրանք կրել են աշխատանքային բնույթ: Այցերը հիմնականում տեղի են ունեցել ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում: ՀՀ ղեկավարության 2011թ. Դուշանբե այցը տեղի է ունեցել ԱՊՀ ձևավորման 20–ամյակի, իսկ 2015թ. ՀԱՊԿ–ի Խորհրդի նստաշրջանի շրջանակներում, իսկ 2016 թ. հոկտեմբերի 13-14–ը Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնի Հայաստան այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթում նշել է, որ «հայ–տաջիկական հարաբերությունների ներկայիս մակարդակը չի համապատասխանում ոչ երկու երկրների քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակին, ոչ էլ հայ և տաջիկ ժողովուրդների բարեկամությանը, ուստի, և անհրաժեշտ է երկուստեք հետևողականորեն խորացնեն և ամրապնդեն միջպետական հարաբերությունները» [15]:

2017թ. հայ–տաջիկական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի շրջանակներում արդեն որոշակի գործնական քայլեր արվեցին տնտեսական համագործակցությունը ուժեղացնելու, ինչպես նաև կրթության որակավորումների, գիտական աստիճանների ու գիտական կոչումների փոխճանաչման ուղղությամբ: Վերջինիս վերաբերյալ 2017թ. հունիսի 14-ին երկու երկրների միջև ստորագրվեց համաձայնագիր [9]: Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմամոլի Ռահմոնի այցի շրջանակներում երկու երկրների ձեռներեցների միջև նոր գործարար կապեր ստեղծելու նպատակով կազմակերպվել է «Հայաստան–Տաջիկստան» գործարար համաժողով: Համաժողովի շրջանակներում ստեղծվել էր աշխատանքային խումբ, որն էլ իր հերթին պետք է կազմեր արտահանման ներուժ ունեցող ապրանքների ցուցակ: Ծրագրերի մեջ էր նաև համատեղ կոոպերացիաների ստեղծումը թեթև արդյունաբերության, ոսկերչության ոլորտներում փոխգործակցելու համար: Համաժողովի շրջանակներում Հայաստան եկած «Տաջինվեստի» գլխավոր տնօրեն Զաբիրզոդե Նիքրուիխանջան նշել է, որ տարբեր ոլորտների խոշոր ընկերություններ ներկայացնող գործարարներ շատ հետաքրքրված են աշխատելու հայ գործընկերների հետ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու համար, քանի որ որոշ ոլորտներում հատկապես ռուսական շուկայում Հայաստանն ունի առաջատար դիրք [7]:

ԱՊՀ շրջանակներում կազմակերպվող հերթական այցերը տեղի ունեցան 2018թ. ընթացքում առաջին փոխվարչապետ Ա. Միրզոյանի (հունիսի 2) և վարչապետ Ն. Փաշինյանի (սեպտեմբերի 28) մասնակցությամբ: Վերջինիս հանդիպման ընթացքում Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնը գոհունակություն է հայտնել երկկողմ քաղաքական հարաբերությունների մակարդակից և կարևորել առևտրատնտեսական կապերի ընդլայնման ու դրանց նոր թափ հաղորդելու ուղղությամբ համատեղ քայլերի իրականացումը [17]:

Այսպիսով, հայ-տաջիկական երկկողմ միջպետական հարաբերությունները արձանագրել են՝

- դանդաղ, բայց կայուն զարգացում,

- երկու պետությունների հարաբերություններն ու շփումները ավելի սերտ են ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում,

- երկկողմ կապերն ու այցելությունները հիմնականում զարգանում են տնտեսական ու ռազմաքաղաքական հարցերի շուրջ, իսկ հայ համայնքը, պայմանավորված նրա փոքրաթիվ լինելու հանգամանքով, քննարկվող հարցերի լայն շրջանակից դուրս է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 238:
2. ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 57:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիր, 02.03.1994, Մոսկվա, ՀՀԱԳՆ ՊՏ 2002.06.12/1(1)։
4. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիր, 03.04.2002, Դուշանբե, ՀՀԱԳՆ ՊՏ 2002.12.16/7(7)։
5. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., Երևան, 2016, էջ 185:
6. Ալեքսանյան Հ., Հայազգի կուսակցական–պետական գործիչները Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, N2, Երևան, 2019։
7. Գործարար համաժողով՝ հայ և տաջիկ գործարարների մասնակցությամբ https://hy.armradio.am/2017/06/14/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%a1%d6%80%d5%a1%d6%80-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%aa%d5%b8%d5%b2%d5%b8%d5%be%d5%9d-%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d6%82-%d5%bf%d5%a1%d5%bb%d5%ab%d5%af-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae/։
8. Զրույց դեսպանի հետ. Վլադիմիր Բադալյան, https://news.am/arm/news/268228.html։
9. Կրթության որակավորումների գիտական աստիճանների և գիտական կոչումների փոխճանաչման և համադրելիության մասին համաձայնագիր, http://escs.am/files/files/2019-07-06/ea3df94354dc25c04f58246919cd9e16.pdf։
10. «Հայաստանի Հանրապետություն», 20 հոկտեմբերի, 1990:
11. Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, Երևան, 2003, էջ 518:
12. Հայկական ԽՍՀ գերագույն խորհրդի որոշումը https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3148:
13. Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003։
14. Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները, http://sarinfo.org/lib/pdf/Hetkhorhrdayin_Yerkrner.pdf:
15. ՀՀ նախագահ. Հայ-տաջիկական միջպետական հարաբերությունները զարգացնելու դինամիկա կա, http://www.panarmenian.net/arm/news/223160:
16. ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայք http://www.mindiaspora.am/am/News/129:
17. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Դուշանբե, https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2018/09/27/Nikol-Pashinyan-working-visit-to-Dushanbe/:
18. Вардапетян А., Таджики и армяне, https://noev-kovcheg.ru/mag/2007-10/901.html:

19. Дипломатия Таджикистана, вчера и сегодня 1, Душанбе, 2009, с.57 https://mfa.tj/uploads/main/2013/03/tajikistan_diplomacy_the_past_and_the_present_ru.pdf, с. 296.
20. Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 год., Москва, 1990, http://istmat.info/files/uploads/17594/naselenie_sssr._po_dannym_vsesoyuznoy_perepisi_naseleniya_1989g.pdf с. 49.
21. Писаренко Д., Армяне в Таджикистане, https://ru.armeniasputnik.am/columnists/20170615/7648158/armyane-v-tadzhikistane-ozdateli-uchebnika-i-issledovateli-pamira.html.
22. Саидов З., Внешная политика Республики Таджикистан на современном этапе (1992-2005 гг.), Авасто, 2006.
23. Таджикистан, весна 1992-го: Кровь. Начало. Свидетельства очевидцев https://www.fergananews.com/articles/9341.
24. Шералиевич С., Внешняя политика республики таджикистан (1991-2017 гг.), Душанбе, 2017, http://www.kmt.tj/sites/default/files/pdf_files/vneshnyaya_politika_rt-2.pdf с. 142.

РЕЗЮМЕ
АРМЯНО-ТАДЖИКСКИЕ ОТНОШЕНИЯ В ПОСТСОВЕТСКИЕ ГОДЫ

Анаит Шагоян

Ключевые слова: Центральная Азия, дипломатические отношения, союзные республики, соглашения, СНГ, ОДКБ, Эмомали Рахмон, армянская община

В статье представлены армяно-таджикские отношения после распада СССР, которые развивались на основе двусторонних соглашений и договоров, подписанных в рамках официальных встреч стран СНГ и ОДКБ.

Также затронут вопрос об интеграции армянской общины в Таджикистане: выявлены проблемы общества, культуры, образования и т.д. Несмотря на двусторонние связи, вопросы армянской общины остаются вне сферы проблем обсуждаемых вопросов.

SUMMARY
ARMENIAN-TAJIK RELATIONS IN THE POST-SOVIET YEARS

Anahit Shagoyan

Keywords: Central Asia, diplomatic relations, union of republics, agreement, CIS, CSTO, Emomali Rahmon, Armenian community

The article presents the Armenian-Tajik relations after the collapse of the USSR, which developed on the basis of bilateral agreements and treaties signed in the framework of official meetings of the CIS countries and the CSTO.

We have represented the integration of the Armenian community in Tajikistan. The problems of society, culture, education, etc are identified. Despite bilateral ties, the issues of the Armenian community remain outside the scope of the issues under discussion.